Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries



Հայաստանում էմերալդ ցանցի ստեղծմանը նպաստող գործողությունների ազգային ծրագրի վերաբերյալ առաջարկություններ (2024–2030 թթ.)

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP | karEC environmental and energy engineering consultancy

© 2024, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ / Համաշխարհային բանկ

1818 H Street NW

Վաշինգթոն ԿՇ 20433

Հեռախոս՝ +202-473-1000

Կայքէջ՝ www.worldbank.org

Պատասխանատվությունը

Սույն աշխատանքը կատարվել է Համաշխարհային բանկի աշխատակազմի կողմից: Այս աշխատանքի շրջանակներում ներկայացվող բացահայտումները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր կերպով չեն արտահայտում Գործադիր տնօրենների խորհրդի կամ նրանց կողմից ներկայացվող կառավարությունների տեսակետները:

Այս ուսումնասիրությունը իրականացվել և հաշվետվությունը մշակվել է «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» ծրագրի (ԵՄ ՀՇՆԾ) ֆինանսավորմամբ: Այստեղ բերված տեսակետները որևէ կերպով չեն կարող դիտարկվել որպես ԵՄ պաշտոնական տեսակետը:

Եվրամիության կողմից ֆինանսավորվող և ՏՀԶԿ-ի, ՄԱԿ-ի եվրոպայի տնտեսական կոմիտեի, ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի ծրագրի, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ԵՄ ՀՇՆԾ-ն օգնում է Արևելյան գործընկերության երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և բարելավել իրենց բնակչության բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով բնապահպանական գործողություններին, ցուցադրելով և բացելով հնարավորություններն՝ ավելի կանաչ աճի և շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ ստեղծելու միջոցով:

Համաշխարհային բանկը չի երաշխավորում այս աշխատանքի շրջանակներում ներկայացվող տվյալների ճշգրտությունը, ամբողջականությունը կամ արդիականությունը և պատասխանատվություն չի կրում տեղեկատվության սխալների, բացթողումների կամ տարբերությունների համար կամ որևէ պատասխանատվություն չի կրում այստեղ բերված տեղեկատվության, մեթոդները, գործընթացները կամ եզրակացությունները կիրառելու կամ չկիրառելու համար: Այս աշխատանքի շրջանակներում բերված ցանկացած քարտեզում ներկայացվող սահմանները, գույները, անվանումները և որևէ այլ տեղեկատվություն չի ենթադրում Համաշխարհային բանկի որևէ դատողություն, որը վերաբերում է ցանկացած տարածքի իրավական կարգավիճակին կամ նման սահմանների հաստատմանը կամ ընդունմանը:

Այս հրապարակմանը կխնդրեինք հղում կատարել հետևյալ կերպ. «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment) (2024թ.), *Հայաստանում Էմերալդ ցանցի ստեղծմանը նպաստող գործողությունների ազգային ծրագրի վերաբերյալ առաջարկություններ (2024–2030թթ.) Վաշինգթոն Կ.Շ., Համաշխարհային բանկ*

Լուսանկարը՝ © Berta Photography

Երախտագիտություն

Այս ուղեցույցները մշակվել են kartECO (բնապահպանական և էներգետիկ ճարտարագիտության գծով խորհրդատու) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ) կողմից՝ միջազգային և տեղական փորձագետների հետ միասին։

Հեղինակների թիմը իր անկեղծ երախտիքի խոսքերն է ուղղում Օթարս Օպերմանիսին (Կենսաբազմազանության փորձագետ, ՀԲ), Իրինա Ղափլանյանին (Կլիմայի փոփոխության գծով ավագ մասնագետ, ՀԲ) և Կարեն Աղաբաբյանին («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» գործողության համակարգողը Հայաստանում)՝ ծրագրի ողջ ընթացքում իրենց հույժ կարևոր ուղղորդման և մենթորության համար։

Թիմը շնորհակալ է ՀՀ կառավարությանը՝ այս ուղեցույցները մշակելու ընթացքում իր անգնահատելի հետադարձ կապի և մասնակցության համար։

Բովանդակություն

Հապավումներ 5

Սահմանումներ 6

Գործողությունների ազգային ծրագրի նպատակը 7

Ամփոփագիր 8

Ներածություն 10

Նպատակներ և խնդիրներ 10

ԱԳԾ-ի կառուցվածքը 12

Ներկայիս իրավիճակը 13

Հայաստանում «Էմերալդ ցանց» ծրագրի պատմությունը 13

Ճանապարհային քարտեզի սխեմա 2030թ. 15

Հիմնական սկզբունքներ 15

Առաջնահերթ բաղադրիչներ 15

Ժամանակացույց 16

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՊՀՀՏ	Պահպանության հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածք
ԿԲԿ	Կենսաբազմազանության կոնվենցիա
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵԲԳ	Եվրոպական բնապահպանական գործակալություն
ԵՄ	Եվրոպական միություն
EUNIS	Եվրոպական բնության տեղեկատվական համակարգ
ԵՄ-ՀՇՄԾ	Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի ծրագիր
ԿԲՇ	Կենսաբազմազանության գլոբալ շրջանակ
GIZ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (*Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH*)
ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ԱԳԾ	Ազգային գործողությունների ծրագիր
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԲՀ	Բավարարության համաթիվ
ՏՍԶ	Տվյալների ստանդարտ ձև
UNECE	ՄԱԿ-ի եվրոպայի տնտեսական կոմիտեի
ՄԱԿ-ի ՇՄԾ	ՄԱԿի շրջակա միջավայրի ծրագիր
UNIDO	ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ՊՏՀՀ	Պահպանվող տարածքների համաշխարհային հանձնաժողով
ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ

Սահմանումներ

- **Առաջարկվող տարածքներ:** Մասնակից երկրները սահմանում են պահպանվող բուսատեսակներն ու բնական միջավայրերը, որոնք պետք է պահպանվեն Բեռնի կոնվենցիայի բանաձևերի համաձայն: Հետագայում նրանք առաջարկում են տարածքներ, որոնք հայտնի են որպես պահպանության հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ/ՊՀՀՆՏ, որոնք համապատասխանում են այդ բուսաբուսատեսակների և բնական միջավայրերի երկարաժամկետ գոյատևումն ապահովելու պայմաններին: Առաջին փուլի ընթացքում (պոտենցիալ տարածքների որոշում) երկրները Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն են ուղարկում առաջարկվող վայրերի վերաբերյալ գիտական տեղեկատվություն պարունակող տվյալների բազա:
- **Պաշտոնական թեկնածու տարածքներ:** Փուլ 1-ը (պոտենցիալ վայրերի սահմանումն ավարտվելուց հետո), սկսվում է Փուլ 2-ը, որի շրջանակներում իրականացվում է վտանգված բուսատեսակների և բնական միջավայրերի երկարաժամկետ գոյատևումն ապահովելու համար այդ տարածքների համապատասխանության գիտական գնահատում: Եթե որոշ տեսակներ և բնական միջավայրեր անբավարար են համարվում, կարող են պահանջվել լրացուցիչ տարածքներ:
- **Ընդունված տարածքներ**: Երրորդ և վերջին փուլում (III փուլ) թեկնածու տարածքները ներկայացվում են մշտական հանձնաժողովին՝ հաստատվելու, որպեսզի պաշտոնապես ընդգրկվեն Էմերալդ ցանցում: Այնուհետև երկրները ազգային օրենսդրության կամ վարչական միջոցառումների միջոցով ազգային մակարդակով նշանակում են տարածքները և սկսում են պլանավորել ու իրականացնել կառավարման միջոցառումներ:
- **Նշանակված տարածքներ և տեղամասեր:** Հայաստանի պետական արգելոցներ, ազգային պարկեր և արգելավայրեր:
- **Այլ հողեր**: ՀՀ պետական, համայնքային և մասնավոր հողեր:

Տեքստում «նախկին տարածքներ» եզրույթը վերաբերում է թեկնածու տարածքներին, որոնք վերանայվում են «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում:

Գործողությունների ազգային ծրագրի նպատակը

Մշակել նախաձեռնությունների շրջանակը մինչև 2030 թվականը Հայաստանում Էմերալդ ցանցի ստեղծումը վերանայելու և առաջ մղելու համար՝ 2030-2035թթ. ժամանակաշրջանի համար ընդլայնված պլանով հանդերձ: Հայաստանում Էմերալդ ցանցի ստեղծումը նպաստելու է Կենսաբազմազանության ազգային գործողությունների ծրագրի կատարմանը և կհամապատասխանի այնպիսի միջազգային համաձայնագրերին, ինչպիսիք են Բեռնի կոնվենցիայի մինչև 2030[1] թվականի ռազմավարական ծրագիրը և Ցանցի[2] աշխատանքային պլանը 2020 թվականից հետո (կենսաբազմազանության գլոբալ շրջանակային փաստաթղթի 2030 թվականի (Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի համաձայն):[3]

[1] Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտե, 2022. «Բեռնի կոնվենցիայի ռազմավարական պլան մինչև 2030թ. համար», հասանելի է այստեղ՝ https://rm.coe.int/tpvs21e-2022-strategic-plan-8th-draft/1680a8bea8

[2] Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտե, 2022. «Էմերալդ ցանցի 2011-2020 թթ. աշխատանքային պլանի գնահատում: Աշխատանքային պլանի առաջարկ 2020 թվականից հետո ժամանակաշրջանի համար», 2020թ.: Հասանելի է՝ https://rm.coe.int/evaluation-of-the-2011-2020-emerald-network-workplan-and-proposal-of-a/1680a040a9

[3] Կենսաբազմազանության համաշխարհային շրջանակ 2020-ից հետո ժամանակաշրջանի համար, 2022թ., https://www.cbd.int/doc/c/409e/19ae/369752b245f05e88f760aeb3/wg2020-05-l-02-en.pdf

Ամփոփագիր

Ազգային գործողությունների ծրագրի (ԱԳԾ) նպատակն է ներկայացնել կենսունակ 6-ամյա ճանապարհային քարտեզ (2024-2030թթ.) և միջոցառումների համակողմանի քննական ակնարկ, որը կօգնի Հայաստանի կառավարությանը առաջ ընթանալու I, II և III փուլերով Էմերալդ ցանցի ստեղծման ճանապարհին:

ԱԳԾ-ն ներկայացնում է այն առավել կարևոր և անհետաձգելի խնդիրները, որոնք պետք է հաշվի առնվեն Հայաստանում Էմերալդ ցանցի առաջխաղացման համար: Չափազանց կարևոր է Էմերալդ ցանցի տվյալների բազան վերանայելու և Էմերալդ բարոմետրի ցուցիչի արժեքները թարմացնելու հրատապ անհրաժեշտությունը, մինչև որ այն հասնի 100-տոկոսանոց բավարարության համաթվի: Նաև անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի վերանայի որոշ թեկնածու Էմերալդ տարածքներ, ինչպես նաև գնահատի նոր տարածքներ՝ բնական միջավայրերի և բուսատեսակների ավելի լավ պաշտպանության համար՝ Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերի պահանջների համաձայն: Ավելին, պետք է մշակել Էմերալդ տարածքների կառավարման պլաններ, որոնցում հաշվի առնվեն նպատակային բուսատեսակների և բնական միջավայրերի պահպանման կարիքները, և սկսել պահպանման կոնկրետ միջոցառումների կատարումը: Եվ վերջապես անհրաժեշտ կլինեն վարչական և օրենսդրական փոփոխություններ:

Բեռնի կոնվենցիան շեշտում է առաջնահերթ գործողությունների երեք լայն կատեգորիաների անհրաժեշտությունը՝ նույնականացնելով և նշանակելով Էմերալդ տարածքներ, պահպանելով և կառավարելով այս տարածքները և հաղորդելով և իրազեկվածությունը բարձրացնելով կենսաբազմազանության պահպանման կարևորության մասին:

ԱԳԾ-ն բովանդակում է յուրաքանչյուր փուլի կոնկրետ նպատակները և մինչև 2030 թվականը այդ նպատակներին հասնելու միջոցառումները: Այդ փաստաթղթի առանցքային տարրը Ճանապարհային քարտեզի սխեման է, որը միավորում է Էմերալդ տարածքների գնահատման առաջնահերթություններն ու բաղադրիչները մեկ միասնական, տեսանելի պատկերում: Ճանապարհային քարտեզում նույնականացված սպեցիֆիկ ուղենիշերը ներառում են Տվյալների ստանդարտ ձևերի (ՏՍՁ) վերանայումը գոյություն ունեցող և նոր տարածքներում և կենսաաշխարհագրական գնահատման կանոնավոր աշխատաժողովների և երկկողմ հետագա հանդիպումների մշակումը, մասնակցությունը և արդյունքների գնահատումը: ԱԳԾ շրջանակը նաև ներառում է հաղորդակցության և իրազեկման հայեցակետը, քանի որ սա միջազգային պայմանագրերի շրջանակներում նախատեսվող ապագա պարտավորություն է:

6-ամյա ճանապարհային քարտեզը նախանշելիս ԱԳԾ-ով թիրախներ են սահմանվում ավելի երկար ժամանակահատվածի, այն է՝ 2030-2035թթ. համար, որի ընթացքում Էմերալդ ցանցն իրատեսականորեն կարող է ամբողջությամբ իրականացվել, այսինքն՝ բոլոր Էմերալդ տարածքներն ընդունված են, բավարարության ցուցանիշը և ակտիվ կառավարման պլանները՝ 100 տոկոսով ապահովված:

ԱԳԾ-ն ուսումնասիրվել է Հայաստանի շրջակա միջավայրի նախարարության կողմից, որը հանձն է առել այն ներկայացնել հիմնական գործընկերներին՝ բաց, լայն հանրային ներգրավման և կարծիքներ հավաքագրելու համար, որը հաջորդ քայլն է հանդիսանում այն ավարտին հասցնելու և վերջինիս առաջարկները օրինական ձևով ներդնելու համար։ Կառավարությունը նաև հանձն է առել անհրաժեշտ շրջանակն ու գործիքները տրամադրել ճանապարհային քարտեզն իրականացնելու և վերջինիս իրականացումը մշտադիտարկելու համար։

Ներածություն

Նպատակներ և խնդիրներ

Ազգային գործողությունների ծրագրի նպատակն է ապահովել կենսունակ 7-ամյա ճանապարհային քարտեզ 2024-2030թթ. համար՝ 2030- 2035թթ. երկարացված ժամկետով: Այն միջոցառումների համապարփակ քարտեզ է պարունակում, որոնք կօգնեն Հայաստանի կառավարությանը առաջ մղելու Էմերալդ ցանցի ստեղծումը (I փուլից մինչև II փուլ և III փուլ):

Ծրագրի ընթացքում բացահայտված էական և անհետաձգելի խնդիրները հետևյալն են.

- **Հայաստանի տեղեկատվական բազան հնացած է**: Տեղեկատվական բազան վերջին անգամ թարմացվել է 2017թ-ին: Երկրի համար Էմերալդ ցանցի վերանայված տեղեկատվական բազան (պատրաստված ԵՄ-ՀՇՄ ծրագրի շրջանակներում) ավտոմատ կերպով կթարմացնի Էմերալդ ցանցի բարոմետրի համաթվի արժեքներն՝ ըստ փուլերի:

- **Որոշ Էմերալդ տարածքների սահմաններն անհրաժեշտ է փոփոխել**: Քննարկումները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է վերանայել որոշ թեկնածու Էմերալդ տարածքների սահմանները՝ առաջնահերթ բուսատեսակների և բնական միջավայրերի ավելի լավ պաշտպանության համար, ինչպես նաև գնահատել նոր տարածքները՝ նորագույն գիտական տեղեկատվության համաձայն: «ԵՄ-ՀՇՄ» ծրագրի շրջանակներում ՇՄՆ-ի (Շրջակա միջավայրի նախարարություն) և Աշխատանքային խմբի հետ լայնածավալ քննարկումներից ու վերանայումներից հետո սահմանների փոփոխությունները և վերանայված տարածքները վերջնական տեսքի են բերվել և ներկայացվել ՇՄՆ-ին «Հայաստանում թեկնածու Էմերալդ տարածքների վերանայման առաջարկների» շրջանակներում:

- **Բավարարության ցուցանիշն (SI) անհրաժեշտ է ավելի լավ կիրառել**: Անհրաժեշտ է վերլուծել և դիտարկել, թե վերանայված տարածքների առաջարկի ժամանակ որ տեսակներն ու բնական միջավայրերն են ճանաչվել անբավարար (2019-ի վերջին սեմինարի հիման վրա) և ինչպես բավարարության ցուցանիշի արժեքը կփոխվի Էմերալդ ցանցի տեղեկատվական բազայի վերանայված տարբերակը ներկայացնելուց հետո:

- **Անհրաժեշտ է ավելի կանոնավոր կենսաաշխարհագրական սեմինարներ և երկկողմ գնահատման հանդիպումներ անցկացնել Բեռնի կոնվենցիայի թեմայով**: Կանոնավոր կենսաաշխարհագրական սեմինարները հնարավորություն կտան ավելի լավ գնահատել պետական բուսատեսակները և բնական միջավայրերը և կնպաստեն պոտենցիալ նոր Էմերալդ տարածքների շուրջ քննարկումներին:

- **Նշանակված պահպանվող տարածքների և ԱՏ-ի և Էմերալդ տարածքների կառավարման ծրագրերի միջև համընկնումների բարձր մակարդակի պոտենցիալ կա**: ՇՄՆ-ի տրամադրած տեղեկության համաձայն՝ նշանակված պահպանվող տարածքների և ԱՏ-ի ակտիվ կառավարման ծրագրերը, որոնք համընկնում են առաջարկվող Էմերալդ տարածքների սահմանների հետ, կաճեն հաջորդ տարիներին, քանի որ դրանց մեծ մասը (այսինքն՝

կառավարման պլանները) նախատեսվում է հաստատել 2024[4] թվականի վերջին: Սա ընդգծում է առկա կառավարման պլաններով ընդգրկված թեմաները վերանայելու անհրաժեշտությունը (օրինակ՝ պահպանման նպատակների սահմանումը, կառավարման պլանավորումը, պահպանության միջոցառումների իրականացումը, մոնիթորինգը և վերանայումը և մասնակցության չափը)՝ հասկանալու համար, թե ինչպես են դրանք համապատասխանում Բեռնի կոնվենցիայի պահանջներին և ինչ հետագա գործողություններ են անհրաժեշտ: Օրինակ, արդյոք կառավարման պլանը բավարա՞ր է Էմերալդ ցանցի համընկնող տարածքում գտնվող բոլոր պահպանվող բուսատեսակների և բնական միջավայրերի պահպանման կարիքները բավարարելու համար: Եթե ո՛չ, ծրագիրը կարող է ճշգրտման կարիք ունենալ:

- **Անհրաժեշտ է «այլ տարածքներում» հանդիպող 11 Էմերալդ տարածքների (պետական, համայնքային կամ մասնավոր հողեր) համար մշակել կառավարման ծրագրեր**: Ընդհանուր առմամբ առաջարկվող Էմերալդ տարածքների[5] 37%-ը համընկնում է այլ հողերի հետ: Էմերալդ տարածքի կառավարման ծրագրերը մշակելու համար ղեկավար ցուցումների գործիքը, որը մշակվել է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի ծրագրի» շրջանակներում, կարող է օգնել այս խնդիրը լուծելու հարցում:[6]

- **Ներկայիս օրենսդրությունը չունի գործիքներ՝ Էմերալդ տարածքները ներդնելու, կառավարելու և մշտադիտարկելու համար**: Նպատակն է Էմերալդ տարածքներն աստիճանաբար ներառել տեղական օրենսդրության շրջանակներում (ԵՄ-թվինինգ):[7] Այնուամենայնիվ օրենսդրությունը չի պարունակում գործիքներ, որոնք նախատեսված են Էմերալդ տարածքների սահմանման, կառավարման և մոնիթորինգի համար, ինչպես նաև չի առնչվում բուսատեսակների խիստ պահպանությանը Բեռնի կոնվենցիայի պահանջների սահմաններում: ԵՄ-թվինինգի արդյունքներն առաջարկել են կառավարման և օրենսդրական տարբեր փոփոխություններ, որոնք միանգամայն անհրաժեշտ են Հայաստանում Էմերալդի առաջխաղացման համար:

ԱԳԾ-ն նախատեսում է մի շարք միջոցառումներ և թիրախներ Հայաստանում Էմերալդ ցանցը 2024թ-ից մինչև 2030թ-ը առաջխաղացնելու՝ երկարացված ժամկետը մինչև 2035թ.: Սահմանվում են յուրաքնաչյուր միջոցառմանը և փուլին կապված թիրախները:

ԱԳԾ-ն դասակարգվել է երեք մեծ առաջնահերթ կատեգորիաների (ռազմավարական/ գործողությունների բաղադրիչներ), որոնք հիմնված են Բեռնի կոնվենցիայի եռաչափ ճանապարհային քարտեզի[8] վրա:

- **Ռազմավարական բաղադրիչ 1**. գործողություններ տարածքների հայտնաբերման և նշանակման համար,

[4] Հայաստանի 28 տարածքներից երեքի ԿՊ-ները ներկայումս ակտիվ են (3/28), սպասվում է մինչև 2023 թվականի վերջ, 13/28, սպասվում է մինչև 2024 թվականի վերջ, 17/28

[5] Նկարագրական վիճակագրությունը կարող է փոխված լինել:

[6] ԵՄ ՀՇՄԾ, 2023թ. «Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների մշակման ղեկավար ցուցումների առաջարկներ», հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.eu4environment.org/app/uploads/2023/12/Armenia_Emerald-Management-Guidelines.pdf

[7] Թվինինգ ծրագիր, «Եվրոպական ստանդարտների համաձայն Հայաստանում կենսաբազմազանության պահպանության ուժեղացում և կայուն օգտագործում», հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.biodiversity.am/en/

[8] Եռաչափ ճանապարհային քարտեզ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրներում լիարժեք գործող Էմերալդ ցանցի հասնելու համար, 2016թ. https://rm.coe.int/16807464ae

- **Ռազմավարական բաղադրիչ 2**. գործողություններ պաշտպանության և կառավարման համար և
- **Ռազմավարական բաղադրիչ 3**. գործողություններ հաղորդակցության/իրազեկման համար:

Ճանապարհային քարտեզի սխեման ամփոփում է այս գործողության բաղադրիչները՝ թափանցիկ և մատչելի ձևով: ԱԳԾ-ն համապատասխանեցվում է բացահայտումների հետ և հիմնվում է Հայաստանում իրականացված ԵՄ կենսաբազմազանության այլ ծրագրերի վերջնարդյունքների, օրինակ՝ «ԵՄ թվինինգ ծրագրի» վրա:

Առաջարկվող ԱԳԾ-ն և վերջինիս ճանապարհային քարտեզը քննության են առնվել ՇՄՆ-ի կողմից, որը պարտավորվել է այն տրամադրել գործընկերներին՝ բաց, լայնածավալ հանրային քննարկումների և կարծիքների հավաքագրման համար, որպես հաջորդ քայլն՝ այն ամփոփելու և դրա առաջարկներն օրինական կերպով ներդնելու համար: Կառավարությունը նաև հանձն է առել անհրաժեշտ շրջանակը և գործիքակազմը տրամադրել՝ ճանապարհային քարտեզը կյանքի կոչելու և վերջինիս իրականացումը մշտադիտարկելու համար, ինչպես նաև համաձայնեցվում է կարողությունների զարգացման առաջին քննարկումների շրջանակներում («Էմերալդ տարածքի պահպանության կառավարման և մշտադիտարկման հայեցակետերի ներածություն» 2024թ-ի փետրվարի 28):[9]

ԱԳԾ-ի կառուցվածքը

ԱԳԾ-ն կազմված է հետևյալից.

- **Ֆոնային տարրեր**, ներառյալ՝ ընթացիկ իրավիճակի հակիրճ վերլուծությունը:
- **ԱԳԾ-ի հիմնական սկզբունքները և նպատակները**, որին պետք է հասնել մինչև 2030 և 2035 թվականները, առաջարկվող ցուցիչի արժեքներն՝ ըստ փուլերի:
- **Ճանապարհային քարտեզի սխեման՝** կարևոր բոլոր մարամասները մեկտեղելու համար:

[9] ԵՄ ՀՇՄԾ, 2024թ. «Էմերալդ տարածքի պահպանության ներածություն, կառավարման և մոնիթորինգի հայեցակետեր», առաջին միջոցառում, ամփոփագիրը կարելի է գտնել հետևյալ հղումով՝ www.eu4environment.org/app/uploads/2024/02/summary-CB-1st-event.pdf

Ներկայիս իրավիճակը

Հայաստանում «Էմերալդ ցանց» ծրագրի պատմությունը

Ստերև ներկայացվում է Հայաստանում Էմերալդ ցանցի ծրագրի պատմական ակնկարկը:

2007-2008թթ. - Հայաստանը սկսում է Էմերալդ ցանցի ներդրումը՝ որպես Հայաստանում[10] Էմերալդ ցանցի փորձնական ծրագրի մեկնարկ: Ըստ Կենսաբազմազանության կոնվենցիայի 4-րդ զեկույցի[11]՝ «աշխատանքներ են ընթանում «բույսերի կարևոր տարածքները» և «կենսաբազմազանության նշանակալի տարածքները» (Էմերալդ ցանց) բացահայտելու և գրանցելու ուղղությամբ»:

2009-2011թթ. - Հայտնաբերվեց և կազմվեց 9 հավանական տարածքների առաջին ցուցակը՝ ուղեկցված համապատասխան բուսատեսակների և բնական միջավայրերի[12] վերաբերյալ տեղեկությամբ: Առաջարկն ընդգրկում էր ավելի քան 200,000 հա (երկրի տարածքի[13] 7%-ը): Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագիրը շարունակվում է նաև 2011 թվականից հետո:

2013թ. - Մեկնարկում է Էմերալդ ցանցի ծրագրի II փուլը («Հայաստանում պոտենցիալ ՊՀՀՆՏ-ների սահմանում և նկարագրություն», ԵՄ/ԵԽ համատեղ ծրագիր, փուլ II)[14] և նպատակ ուներ կազմել Հայաստանում Էմերալդ թեկնածու տարածքների վերջնական ցուցակը: Հայաստանի Էմերալդ ցանցի առաջարկվող տարածքներում ընդգրկված բոլոր բնական միջավայրերը ճշգրտվել և փոխանցվել են EUNIS դասակարգման համակարգ՝ Բեռնի կոնվենցիայի 4-րդ բանաձևի պահանջների համաձայն: Նույն աշխատանքն իրականացվում է 6-րդ բանաձևում ընդգրկված կենդանիների և բուսաբուսատեսակների համար:



2016թ. - Հայաստանում Էմերալդ ցանցում առաջարկվում է 23 թեկնածու տարածքներ ընդգրկել: Այդ 23 տարածքներն ընդգրկում էին 65 կենսամիջավայրեր և 148 տեսակներ (անոթավոր բույսեր՝ 8, անողնաշարավորներ՝ 8, սողուններ՝ 3, թռչուններ՝ 109 և կաթնասուններ՝ 6 տեսակ), որոնք պաշտպանված են Բեռնի կոնվենցիայի 4-րդ և 6-րդ բանաձևերով:[15] Աջարկված տարածքները ներառում են. 1 պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ», 4 ազգային պարկ, 4 արգելավայր և 8 թռչնաբանական

---

[10] Էմերալդ ցանցը Հայաստանի Հանրապետությունում. 2017թ., հրատարակիչ՝ ՀՀ բնապահպանության նախարարություն, https://www.researchgate.net/publication/313917908_The_Emerald_Network_in_the_Republic_of_Armenia

[11] Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի չորրորդ ազգային զեկույցը, Հայաստանի Հանրապետություն. 2009թ., https://www.cbd.int/doc/world/am/am-nr-04-en.pdf

[12] Eionet տվյալների կենտրոնական շտեմարան, https://cdr.eionet.europa.eu/am/bc/emerald/envtoqkqq/overview

[13] Էմերալդ ցանց համատեղ ծրագրի ԵՄ/ԵԽ հանդիպման սկիզբ, փուլ II, Կիև, Ուկրաինա, 24-27 ապրիլի, 2013թ., https://pjp-eu.coe.int/emerald-network/images/armenia.pdf

[14] 2014թ. «ԵՄ - ԵԽ համատեղ ծրագիր՝ բնության պահպանվող տարածքների Էմերալդ ցանցը պատրաստելու համար» փուլ II: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://pjp-eu.coe.int/emerald-network/images/jp%20emerald%20phase%20ii_description%20of%20the%20action_v2_042014.pdf

[15] ԿԲԿ (Կենսաբազմազանության կոնվենցիա), 2019թ., „ՀՀ 6-րդ ազգային զեկույց, Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ace.aua.am/files/2019/05/2019-6th-National-Report-CBD_eng.pdf

պահպանման տարածք (ԿԹՏ): Նախագիծն ընդգրկում էր 1,033,719 հա՝ երկրի ընդհանուր տարածքի 34.7%-ը: Այդ տարածքները դեռևս առկա են պաշտոնապես առաջադրված տարածքների ցանկում:

2015-2019թթ. - Հայաստանը մասնակցում է Էմերալդ ցանցի բավարարության գնահատման երկու շրջափուլի 2015թ-ին և 2019թ.:[16] 2019թ-ի գնահատմամբ ԲՀ-ը հարաբերականորն բարձր է՝ կազմելով 68.7: 206 բնական միջավայրերից և բուսատեսակներից (առաց թռչունների) միայն 11-ն է բավարար և 112 թռչնաբուսատեսակներից միայն 9-ն է անբավարար:[17]

2022-2023թթ. - Թեկնածու տարածքների 2022թ.[18] ցանկը որի տարածքը կազմում է 10,826.2կմ² կամ 1,082,600 հեկտար (համարժեք է երկրի 36.4%-ին, ներառյալ ափամերձ/ծովային ծածկույթը):[19] Այնուամենայնիվ, Պաշտոնապես հաստատված տարածքների ցանկի համաձայն[20] ներկայումս ընդունված տարածքներ դեռևս չկան,չնայած 2017թ-ից ի վեր եղել է բոլոր տարծքների ազգային ծածկույթ և ենթադրվում է, որ II փուլը կավարտվի Բեռնի կոնվենցիայի համար մշտական հանձնաժողովի կողմից պահպանության հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ ճանաչմամբ (ՊՀՀՆՏ):

Գծանկար 1. Էմերալդ սահմանների քարտեզ ամբողջ երկրի համար (2016թ.-ներկա)



NN	Name of candidate site	Area (ha)
1.	"Khosrov forest"State reserve	63794.7
2.	"Sevan"National park	489839.7
3.	"Khor Virap – Armash" area	6998.2
4.	"Lake Arpi"National park	56035.5
5.	"Idjevan" area	47593.1
6.	"Djadjur" area	1711.2
7.	"Lori lakes" area	1596.4
8.	"Impassable brushwood" area	274.41
9.	"Djermuk" area	35015
10.	"Aragats alpine" area	9446.7
11.	"Dilidjan" National park	38634.3
12.	"Gnishik" area	30300.1
13.	"Gorhajk" area	4056.7
14.	"Arevik" National park	60804.7
15.	"Zangezur" area	49066.6
16.	"Tatev" area	14873.1
17.	"Metsamor" area	26427.3
18.	"Khndzoresk" area	3425.7
19.	"Vanand" area	8222.3
20.	"Akhuryan reservoir" area	8389.7
21.	"Rhododendron caucasicus" sanctuary	16191.1
22.	"Arai ler" area	4676.7
23.	"Debed gorge"area	56346.4

Աղբյուր ՝Քարտեզը մշակվել է kartECO-ի կողմից Համաշխարհային բանկի համար

[16] ԵԽ, 2022թ. «Կենսաշխարհագրական գնահատման աշխատաժողովների եզրակացություններ», հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.coe.int/en/web/bern-convention/conclusions-of-the-biogeographical-seminars

[17] Հաշվարկվում է կենսաաշխարհագրական սեմինարների եզրակացությունների հիման վրա: Հասանելի է՝ https://www.coe.int/en/web/bern-convention/conclusions-of-the-biogeographical-seminars

[18] Էմերալդ ցանցի պաշտոնապես առաջադրված թեկնածու տարածքների թարմացված ցուցակը (դեկտեմբեր 2022), https://rm.coe.int/pa09e-2022-updated-list-officially-nominated-candidate-emerald-sites/1680a93c85

[19] Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտե, 2022թ. «Պաշտոնապես առաջադրված թեկնածու Էմերալդ ցանցի տարածքների թարմացված ցանկ», հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/pa09e-2022-updated-list-officially-nominated-candidate-emerald-sites/1680a93c85

[20] Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտե, 2022թ. «Պաշտոնապես առաջադրված թեկնածու Էմերալդ ցանցի տարածքների թարմացված ցանկ», հասանելի է հետևյալ հղումով https://rm.coe.int/pa09e-2022-updated-list-officially-nominated-candidate-emerald-sites/1680a93c85

Ճանապարհային քարտեզի սխեմա 2030թ.

Հիմնական սկզբունքներ

Ճանապարհային քարտեզի սխեմայի նպատակն է ի մի բերել բոլոր կարևոր մանրամասները (ուղենիշեր, միջանկյալ և վերջնական ժամանակացույց՝ առաջընթաց ապահովելու համար, հիմնական ուղենիշեր և խորհրդակցություններ և մշտադիտարկման պլան) մատչելի ձևաչափով:

Առաջնահերթ բաղադրիչներ

ԱԳԾ-ն բաժանվում է երեք ընդգրկուն կատեգորիաների (որոնց հողում է կատարվում որպես ռազմավարական կամ գործողությունների բաղադրիչների), որոնք համապատասխանեցվում են Բեռնի կոնվենցիայի եռաչափ ճանապարհային քարտեզին:[21] Այս բաղադրիչներն են.

- **Ռազմավարական բաղադրիչ 1**: Տարածքների նույնականացման և նշանակման գործողություններ (Աղյուսակ 1-ի Փուլ I, II և III)
- **Ռազմավարական բաղադրիչ 2**: Պահպանության և կառավարման գործողություններ (Փուլ III-ը Աղյուսակ 1-ում)
- **Ռազմավարական բաղադրիչ 3**: Հաղորդակցության և իրազեկման բարձրացման գործողություններ (Փուլին չառնչվող գործողություններ Աղյուսակ 1-ում): Այս բաղադրիչը Էմերալդ ցանցի և կենսաբազմազանության միջազգային պարտավորությունների, ինչպես օրինակ՝ միջազգային պայմանագրերի ակնկալվող հետագա պահանջ է:

.

[21] Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողով, 2016թ. «Եռաչափ ճանապարհային քարտեզ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրներում լիարժեք գործող Էմերալդ ցանցի հասնելու համար», հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/16807464ae

Գծանկար 2. Եռաչափ ճանապարհային քարտեզ՝ Հայաստանում լիարժեք գործող Էմերալդ ցանցի հասնելու համար



Աղբյուր ՝Բեռնի կոնվենցիայի մշտական հանձնաժողով, 2016թ., «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի 7 երկրներում լիարժեք գործող էմերալդ ցանցի հասնելու համար եռաչափ ճանապարհային քարտեզ»: Հասանելի է հետևյալ հասցեով՝ https://rm.coe.int/16807464ae:

Ժամանակացույց

Ի լրումն սկզբնական 6-ամյա ժամանակահատվածի, ԱԳԾ-ն դիտարկում է թիրախներ՝ ավելի իրատեսական, երկար ժամանակահատվածի համար (2030-2035թթ. համար), որի ընթացքում հնարավոր կլինի ամբողջությամբ իրականացնել էմերալդ ցանցը, այսինքն՝ բոլոր տարածքներն

ընդունված են և ունեն ակտիվ կառավարման պլաններ, ինչպես նաև ապահովված է 100% բավարարվածության համաթիվ:

Ակնկալվում է, որ 2024-2030թթ. ընկած ժամանակահատվածում (և երկարացված մինչև 2035 թվականը), ներկա ԱԳԾ-ն կհամընկնի պլանավորման և հաշվետվության այլ փաստաթղթերի հետ, այդ թվում նաև կենսաբազմազանության մասին միջազգային կոնվենցիաների հետ: Բացի այդ, առաջարկվող ճանապարհային քարտեզը կարող է հեշտությամբ համապատասխանեցվել, հետևաբար ավելի լավ մշտադիտարկվել Էմերալդ ցանցի գնահատման շրջափուլերի և գործընթացների հետ:

«Ճանապարհային քարտեզի» սխեմայում ստորև ներկայացված ելակետային արժեքները 2023թ-ի են և ներկայացված են Հայաստանի համար Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության Էմերալդ ցանցի բարոմետր աղյուսակով[22]: Այս արժեքները կօգնեն գնահատել առաջընթացը նպատակային արժեքներին հասնելու գործում, որոնք սահմանվում են մինչև 2025թ-ի վերջը, 2028թ-ի վերջը, 2030թ-ի վերջը և մինչև 2035թ-ի վերջը:

Բեռնի կոնվենցիայի համար կենսաաշխարհագրության սեմինարների և հաջորդիվ երկկողմ հանդիպումների նախնական ժամանակացույցն առաջարկվում է («Հիմնական ուղենիշեր և միջոցառման հարցերով խորհրդակցություններ»):

Նպատակներ

Աղյուսակ 1-ը, 2-ը և 3-ը ներկայացնում են Էմերալդ բարոմետրի ցուցիչի համար քանակական թիրախները: Սյունակները (այսինքն՝ I, II և III փուլերը) ներկայացնում են Էմերալդ ցանցի գործընթացի գործողությունները, ինչպես օրինակ՝ Էմերալդ տարածքների որոշման և նշանակման գործողությունները, ինչպես նաև Էմերալդ տարածքների պահպանության և կառավարման գործողությունները, մինչդեռ «Այլ, ոչ փուլային գործողություններ» անվանումով սյունակը ներկայացնում է հանրային իրազեկման և հաղորդացկության միջոցառումները:

Ամենակարևոր թիրախը 100% բավվարարության ցուցանիշի ապահովումն է: Ակնկալվում է, որ I փուլի թիրախային գործողությունները ևս կնպաստեն Կունմինգ-Մոնրեալի կենսաբազմազանության շրջանակի թիրախ 3-ին 2030թ-ի համար[23], այսինքն՝ հասնել պահպանվող տարածքների պահպանման ազգային նպատակի 30%-ի իրականացման (նաև մինչև 2030թ-ը[24] Բեռնի կոնվենցիայի ռազմավարական պլանով համաձայնեցված նպատակ 1-ն է): [25]

---

[22] Բարոմետրի աղյուսակ, https://tableau-public.discomap.eea.europa.eu/views/EmeraldBarometerdashboard/Barometertable?%3AshowAppBanner=false&%3Adisplay_count=n&%3AshowVizHome=n&%3Aorigin=viz_share_link&%3AisGuestRedirectFromVizportal=y&%3Aembed=y

[23] ԿԲԿ (Կենսաբազմազանության կոնվենցիա), 2022թ..<<2020թ-ից հետո կենսաբազմազանության գլոբալ շրջանակ>>, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cbd.int/doc/c/409e/19ae/369752b245f05e88f760aeb3/wg2020-05-l-02-en.pdf https://www.cbd.int/doc/c/abb5/591f/2e46096d3f0330b08ce87a45/wg2020-03-03-en.pdf

[24] Բեռնի կոնվենցիայի ռազմավարական ծրագիր 2030, 2022 ժամանակահատվածի համար, https://rm.coe.int/tpvs21e-2022-strategic-plan-8th-draft/1680a8bea8

[25] ՆՊԱՏԱԿ 1. Բնական և կիսաբնական էկոհամակարգերի տարածքը, ամբողջականությունը և կայունությունը մեծանում է, այդ թվում պահպանվող տարածքների և տարածքի վրա հիմնված այլ արդյունավետ պահպանության միջոցառումների միջոցով, որոնք ընդգրկում են ցամաքային և ծովային տարածքների առնվազն 30%-ը:

Կենսաբազմազանության գլոբալ շրջանակի թիրախների համար ղեկավար ցուցումների համաձայն[26] պահպանվող ազգային տարածքները և տարածքի վրա հիմնված պահպանության արդյունավետ այլ միջոցառումները պետք է բավարարվեն, որպեսզի ապահովեն 30-ի ապահովմանը: Սրանք ներառում են հստակ որոշված պահպանության երկարաժամկետ նպատակները, միջոցառումները և իրավական պաշտպանությունը: Հայաստանում 30%-ի հասնելու համար լրացուցիչ հանձնառություններ և ջանքեր կպահանջվեն:

Եվրոպական հանձնաժողովը Կենսաբազմազանության նոր ռազմավարություն է ընդունել, որը սահմանում է գործողությունների և հանձնառությունների համապարփակ փաթեթ, որոնք ուղղված են ԿԳՇ 30% թիրախի ապահովմանը:[27, 28] Այս ռազմավարությունը շարունակում է Natura 2000 ցանցը դնել ԵՄ պահպանվող տարածքների կենտրոնում, սակայն կոչ է անում անդամ երկրներին հետագա քայլեր ձեռնարկել՝ Natura 2000 ցանցի բարելավման համար, որն իր ներկայիս վիճակում սահմանափակված է փոքր կամ ցրված տարածքների ներգրավմամբ կամ տարածքների ոչ ադեկվատ կառավարումով, ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը բնության պահպանման գործում: Պահանջվող լրացուցիչ քայլերը ներառում են.

- Natura 2000-ի հետագա տարածքների նշանակում և ցանցի լրացում:
- Բնապահպանական միջանցքների ինտեգրում և հարևան պահպանվող տարածքների կամ Natura 200 տարածքների վերամիացում:
- Բարձր կենսաբազմազանության տարածքների որոշում, որոնք պահպանության կարիք ունեն ազգային մակարդակում՝ պահպանման նպատակներով և միջոցառումներով:

Հանձնաժողովի ուղղորդումներն առաջարկում են, որպեսզի ԵՄ-ի նպատակին հասնելիս հաշվարկելիս հաշվի առնվեն տարածքների պահպանման այլ արդյունավետ միջոցները, եթ

- Տարածքը ընդգրկված է ազգային կամ միջազգային իրավական կամ վարչական ակտով կամ պայմանագրով, որն ապահովում է պահպանման երկարաժամկետ արդյունքներ:
- Սահմանված են պահպանման նպատակներն ու միջոցառումները:
- Տարածքն արդյունավետ կերպով կառավարվում և վերահսկվում է կենսաբազմազանություն ապահովելու նպատակով:

Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) և Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN) խորհուրդ են տալիս, որպեսզի GBF-ի 30% նպատակակետին[29] հասնելու համար մեկնարկային կետը հանդիսանան հետևյալ երեք գործողությունները.

---

[26] ԿԲԿ (Կենսաբազմազանության կոնվենցիա), 2024թ., Կունմինգ Մոնրեալ կենսաբազմազանության շրջանակի թիրախների համար կոնսոլիդացված ուղղորդող ծանոթագրություններ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cbd.int/gbf/targets/notes.shtml#_Toc157069082

[27] ԵՀ, 2022թ. "ԵՄ 30%-ի պահպանություն՝ մարդկանց և բնության համար, բնության և կենսաբազմազանության Natura 2000 լրատու, փետրվար, 2022թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cde.ual.es/wp-content/uploads/2022/03/KHAA22001ENN.en_.pdf

[28] ԵՄ հանձնաժողով, 2022թ., «Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակազմի փաստաթուղթ: Պահպանվող տարածքների նշանակության համար չափորոշիչներ և ուղղորդում», հասանելի է հետևյալ հղումով՝ https://environment.ec.europa.eu/system/files/2022-01/SWD_guidance_protected_areas.pdf

[29] Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը և Բնության պահպանության միջազգային միության համաշխարհային հանձնաժողովը պահպանվող տարածքների համար, 2023թ., «Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի Թիրախ 3-ի ներառական, արդարացի և արդյունավետ իրականացման ուղեցույց», տարբերակ 1, օգոստոս, 2023թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iucn.org/sites/default/files/2023-09/30x30-target-framework.pdf

- կառավարման ներկայիս համակարգի բարելավում,
- նախկինում ճանաչված կամ պահպանվող տարածքների, կամ նախկինում գոյություն ունեցող պահպանվող նախաձեռնությունների ընդլայնում,
- գոյություն ունեցող համակարգի ընդլայնում։

Աղյուսակ 1. Ընդհանուր ճանապարհային քարտեզի սխեման (2023 – 2030թթ.)[30]

ժամանակացույց	Նպատակներ[31]			Գործողություններ			
	Փուլ [32]I	*Փուլ II*	*Փուլ III*	*Փուլ I*	*Փուլ II*	*Փուլ III*	*Այլ ոչ փուլային*
	% ծածկույթ	% ԲՑ	% ԿՊ-ներ				
2023թ. (ելակետային արժեքներ)	36.4	68.7	13	Հանրային խորհրդակցության իրականացում Էմերալդ տարածքի վերջնական փոփոխությունների վերաբերյալ (պետք է ավարտվի 2024 թվականի սկզբին):	Ցանցի բավարարության ինքնագնահատում [բնական միջավայրը և բուսատեսակները թվարկված են թիվ 4 (1996 թ.) բանաձևում և բուսատեսակների ցանկը զետեղված է թիվ 6 (1998 թ.) բանաձևում] փոփոխված առաջարկի՝ ԵՄ-ՀՇՄԾ-ի շրջանակներում (ավարտվելու է 2024 թվականին): Կենսաաշխարհագրական սեմինարների նախապատրաստում և կազմակերպում՝ հիմնված ԵՄ-ՀՇՄԾ-ի նախագծի շրջանակներում փոփոխված առաջարկի վրա (ավարտվելու է 2024 թվականին):	ԵՄ-ՀՇՄԾ-ի շրջանակներում Էմերալդ տարածքի Կառավարման պլանի ուղեցույցների մշակում: (ավարտված է)	չկա

[30] ՀԲ/ԵՄ-ՀՇՄԾ առաջարկվող ձևանմուշ:

